Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝19/1-4.1-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու մասին

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է գիտության բնագավառի հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման, գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղություններին համապատասխանող միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրերի մշակման, թարգմանության ու դրանց իրականացման, միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի շրջանակներում իրականացվող մրցույթների կազմակերպման և իրականացվող ծրագրերի համակարգման աշխատանքներին:

Նշված պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն.
*«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
* անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետում.
* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
* ռուսերենին կամ անգլերենին ազատ տիրապետում:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրելն է:

Աշխատավարձի չափը կազմում է 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) դրամ:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ գիտության կոմիտե, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22,

Դիմող ՀՀ քաղաքացիները գիտության կոմիտե (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 703 սենյակ, հեռ. 21-01-40-107) պետք է ներկայացնեն հետևալ փաստաթղթերը՝

* գրավոր դիմում (ձևը կցվում է),
* կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի)՝ պատճենները.
* աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին (առկայության դեպքում).
* արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
* մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
* անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը՝ ներկայացնելով անձնագիրը (նույնականացման քարտը) կամ հետևյալ էլ. փոստով՝ hr@scs.am:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 25.07.2019թ.: